

Վեհ. Կաթողիկոսի կիսարձանը, որ դրուած է ի ցոյց «Աշնան սպասնի» մէջ, Պարիսաքանակ մի խումբ հայեր ժողովրդական հանգանակութեամբ գնելով այն և յօրինել տալով նորա պղնձէ վերաբատադրութիւնը, նուիրել են վեհափառ կաթուղիկոսին որպէս երաժտագիտութեան նշան և հիացման արտայայտութիւն արտասահմանի գաղութների կողմից նորին սրբութեան 85 ամեայ տարեղարձի առթիւ: Այս գաղափարն իրագործելու համար ընտրուած է մի Յանձնախումբ, իսկ հանգանակութեան մասնակցում են արտասահմանի բոլոր հայերը:

ԲԱՑԱԽԻՍՑԻ ՀԱՅ ԱԶԴԱՑԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ձեռքն ընկաւ Նոր-Ձուղայի Ամենափրկչի վանքի տեղաբանում, որին 1904 թուին լոյս տեսած «Ճարիոր տեղեկադիր հանրական ատեննին յանձնանձանաց Հայ ազգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1903 ամիս գրբուկը, որ չառ խառնի խոյսն լինելով կազմած միջից հազիր կարելի եղաւ իմանալ հետեւեալ տեղեկութիւնները.

«Հանրային ատենի հոգացողութեան ենթարկուած են հետեւալ հայ հաստատութիւնները՝

Բատաւիայի ս. Յովհաննէս եկեղեցին, նոյնտեղի հայոց «Մանուկ և Յարութիւն ուսումնարան», Բատաւիայի բարեգործական «Հայկան միաբանութիւննը», Նոր Ձուղայի ազգաստատութիւնները, այն է կենդրոնական երկուու դպրոցները, Մ. և Յ. ուսումնարանները, Ագրասաց Արկլը, Ամենափրկչի վանքը և տպարանը, ս. Կատարինէ դպրոցը, Սանդիբարանի ս. Պողոսի գպրոցը, ս. Մինսա և ս. Յովհաննէս եկեղեցիները:

Իժբաղսարար շատ աղօտ յիշատակութիւններ կան տեղեկագրում վերը յիշած ապագային հաստատութիւնների մասին, ինչպէս նաև առաջ չեն բերուած նոցա նիւթական և բարոյական դրութեան մասին մանրամասն տեղեկութիւններ, կայ միայն մի ընդհանուր խիստ համառօտ հաշուէլիու, որից երեսում է, որ ս. Յովհաննէս եկեղեցին 1903 թուին մուտք է ունեցել 187910,10 լի, իսկ ծախք 95600, լի, ունի կալուածներ և դրամով 92310,10 լի:

Կ. ԵԶԵՍՆԻ ՅՈԹԵԼԵԱՆ

Ինչպէս արդէն անցեալ անգամ հաղորդել էինք, նոյեմբերի 6-ին Ս. Պուրդում կատարուել է յայտնի գրագէտ և արևելեան լեզուների մագիստրոս Կարապետ Յ. Նզեանի պետական ծառայութեան և գրական գործունէութեան յիսնամետ յօթելեանը:

«Լումայի» խմբագրութիւնը նոյեմբերի 5-ին ուղղել էր Պ. Բուրգ իւր աշխատակից պ. Սոեփան Գաբրիէլեանին հետեւ և առաջ հեռազիրը.—

«Լումայի» խմբագրութիւնը խնդրում է Ձեզ լինել ներկայացուցիչ խմբագրութեանս կողմից և մատուցանել տաղանդաւորյօրեւար հոչայաւոր Կարապետ Նզեանին իւր չնորհաւորութիւնները նորա յի նամեայ անխոնջ դարձունէութեան առիթով արքունի ծառայութեան ասպարիզում և բարձր գնահատութեան արժանի Հայ պատմական զբականութեան դիտնական արդիւնաւոր ուսումնասիրութեան վերաբերմամբ. և յատուկ իմ կողմից»:

Յօրեւեանը կատարուել է մեծ շուքով և խուռն բազմութեան ներկայութեամբ՝ «Լումայի» հետևեալ համարում մենք կտանք այդ լուելայն և նշանաւոր հասարակական և գրական գործի ընդարձակ կենսադրութիւնը, պատկերը և յօրեւեանի մանրամասն նկարագրութիւնը, իսկ առ այժմ հաղորդում ենք, որ յօրեւեանի հանդէսն սկսուել է Ազգիս Վեհ. Հայրապետի չնորհաւորական կոնդակի ընթերցումով, որ կարդացել է պ. Ստեփան Մամիկոնեանը, ապա կարդացուել են ուղերձներ Մոսքուայի հայ գաղութից, Պ. Բուրգի Հայ եկեղեցական խորհրդականից, Պ. Բուրգի գաղութի կողմից, ապա խօսել է «Լումայի» ներկայացուցիչը և այլն և այլն:

Հետևեալ կիրակի ճաշ է տուել պ. Նզեանին Պ. Բուրգի հայ գաղութից, որ տևել է $6\frac{1}{2}$ ժամից մինչև գիշերուայ 1-ը:

Իւր յիսնամեայ ծառայութեան առիթով Ն. Մ. Թագաւոր Կայսը բարեհանել է չնորհել պ. Կ. Նզեանին իսկական գաղտ. Նի խորհրդականի աստիճան:

ՊՐՕՖ. ՄԱՌԻ ՄԻ ՆՈՐ ԶԵՂՈՒՑՈՒՄ.

Անցեալ նոյեմբերի 25-ին, Պ. Բուրգի Արևելեան բաժնում Բարօն Վ. Բոգէնի նախագահութեամբ կայացած նիստում պրօֆ. Ն. Մառը կարդացել է մի զեկուցում Մոնղոլների՝ քրիստոնեաներին անուանող «արկառուն» բառի մասին, որի ծագումը վաղուց զբաղեցրել է արևելագէտներին: Յարգելի պրօֆէսորը յայտնեց, որ ինքը ենթադրում է, թէ այդ բառը հայկական ծագում ունի լուծուածութիւն: Այս ժամանակամիջոցում կատաղի կուի էր մղում երկու կրօնական կուսակցութիւնների մէջ. քաղկեդօնականների և նոցա հակառակորդների: Վերջիններս յաղթող հանդիսացան: Քաղկեդօնականները ստիպուած էին երկրից հեռանալ և գնալ զանազան կողմեր. նոցա մեծ մասը բնակուեցան Վրաստան և ձուլուեցան վրացիների հետ. միւս մասը դիմեց Բուրգարիս և Յունաստան. երրորդ մասը, որոնք առևտուրով էին պարապած, ուղղուեց գէպի Միջին Ասիա